

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 14 Յունուարի, 2008

ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբը Չորեքշաբթի, Դեկտեմբերի 19-ին կազմակերպել էր առաջին միջոցառումը Հանրային քաղաքականութեան հարցերով մի շարք համաժողովների, որոնց նպատակն է ամերիկահայ երիտասարդներին օգնել ըմբռնելու եւ գնահատելու այն կարեւոր դերը, որ նրանք կարող են կատարել Միացեալ Նահանգների պետական ու զանգուածային լրատուամիջոցներում ներգրաւելով: Առաջին համաժողովը կենտրոնացել է այն դերին, որ կարող են ունենալ ամերիկեան լրատուամիջոցները՝ ամերիկահայութեանը յուզող հարցերը հանրութեանը ներկայացնելու եւ մեկնաբանելու համար: Համաժողովին մասնակցելէն Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան ղեկավարները: «Որպէս համայնք, մենք պէտք է ներգրաւենք եւ բարելաւենք մեր յարաբերութիւնները ամերիկեան զանգուածային լրատուամիջոցների հետ, օգնելով նրանց, որ նրանք աւելի լաւ հասկանան ամերիկահայութեանը յուզող հարցերը», - ելոյթ ունենալով միջոցառմանը ասել է ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախմբի ղեկավարներից Զանգու Արմէնեանը:



Ակնկալուում է, որ Նեւադայի նահանգի հայկական յարաճուն համայնքը քաղաքական գործօն կը հանդիսանայ Յունուարի 19-ին այդ նահանգում կայանալիք նախագահական նախընտրութիւններում: 1990 թուականից ի վեր, Նեւադայի ազգաբնակչութիւնը եւ տնտեսութիւնը ուշագրաւ աճ են արձանագրել, հիմք հանդիսանալով, որ Նեւադան համարուի երկրորդ արագաճ նահանգը Արիզոնայի նահանգից յետոյ: 2006 թուականի տուեալների համաձայն, Նեւադան մօտաւորապէս երկուս ու կէս միլիոն աչգաբնակչութիւն է ունեցել, ինչը աւելի քան 20 տոկոսի աճ է համարուում 2000 թուականի մարդահամարից յետոյ: Ինչ վերաբերում է Նեւադայի հայկական համայնքին, ապա ըստ որոշ տուեալների, նահանգում ապրում է աւելի քան 10,000 հայ, որի խոշորագոյն կազմակերպութիւնը ՀՀԴ Նեւադայի Հայ Դատի յանձնախումբն է:



Հինգշաբթի, Յունուարի 10-ի երեկոյեան ժամը 8-ին, Գլենդէլի Ապրիլ հայկական գրախանութում տեղի ունեցաւ Բոստոնի համալսարանի հայոց արդի պատմութեան պրոֆեսոր, դոկտոր Սիմոն Փայասլեանի «Հայոց Պատմութիւն» խորագրով նոր գրքի շնորհանդէսը, հեղինակի ներկայութեամբ: 300 էջից բաղկացած եւ անգլերէնով լոյս տեսած սոյն աշխատութիւնում դոկտոր Սիմոն Փայասլեանը ներկայացրել է հայ ժողովրդի պատմութիւնը սկզբից մինչեւ մեր օրերը: Ինչպէս գրքի ներկայցման ելոյթում նշեց հեղինակը, գիրքը մասնաւորաբար հրատարակուել է ամերիկեան համալսարաններում հայոց պատմութեամբ զբաղուող հայ ուսանողների համար: «Հայոց Պատմութիւն» պատմագիտական աշխատութիւնը պրոֆեսոր Սիմոն

Փայասլեանի անգլերէնով հրապարակած հինգերորդ գիրքն է անցնող ութ տարիների ընթացքում: Նրա գրչին են պատկանում նաեւ հայկական ու ամերիկեան մամուլում լոյս տեսած բազմաթիւ յօդուածներ ու վերլուծութիւններ հայ ժողովրդի քաղաքական ու պատմական իրադարձութիւնների մասին: «Հայոց Պատմութիւն» գրքի շնորհանդէսին ներկայ էր Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանի անդամ Փոլ Գրիգորեանը, որը պրոֆեսոր Փայասլեանին յանձնեց յատուկ գնահատագիր՝ իր կատարած գիտական ու համալսարանական աշխատանքների համար:



Շաբաթ, Յունուարի 5-ին, Լոս Անջելոսի UCLA համալսարանում տեղի է ունեցել միօրեայ աշխատանիստ ամերիկահայ համայնքին, մասնաւորաբար երիտասարդութեանը յուզող հարցերի շուրջը: Միջոցառմանը, որը կազմակերպուել էր ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի եւ UCLA համալսարանի հայ ուսանողական ընկերակցութեան համատեղ ջանքերով, մասնակցել են հարաւային Կալիֆորնիայի շուրջ 12 քոլէջների եւ համալսարանների հայ ուսանողներ եւ ուսանողական միութիւնների ներկայացուցիչներ: Անդրադառնալով միջոցառման նշանակութեանը, UCLA համալսարանի հայ ուսանողական ընկերակցութեան նախագահ Քրիս Խաչատրեանն ասել է, թէ աշխատանիստը շատ անհրաժեշտ եւ ուսուզողական միջոցառում էր: «Ամերիկահայ ուսանողները պէտք է իրազեկ լինեն համայնքային հարցերին եւ գիտակցեն, որ իրենք որոշակի ձայն ունեն համայնքային կեանքում նորարարութիւններ կատարելու համար», - ասել է նա: Միջոցառմանը ելոյթ է ունեցել Գլենդէլի քաղաքապետարանի քարտուղար Արտաշէս Քասախեանը, որը խօսել է UCLA համալսարանում իր ուսանողական տարիների փորձառութեան մասին, նշելով, որ իբրեւ հայ ուսանողական միութեան ղեկավար համալսարանում արժարժել է հայութեանը յուզող հարցեր եւ ուսանողների ուշադրութեանն է հրաւիրել այն ազդեցութիւնը, որ նրանք կարող են գործել համալսարանական եւ համայնքային շրջանակների վրայ:

Այս լուրերը տրամադրուած են
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: